Մեւ տատակէն մինչեւ լէյլան, մինչեւ վարդերն հրագեղ,
Խօլ հեշտանքով մ'ահա գի՛նով՝ արե՛ւ, արե՛ւ կը խմեն...
Ամէն կողմ դող, ամէն կողմ յոյգ, ամէն կողմ երգ,
Հոս կը սողան, հոն կը ծաղկին, հոն կը թռչին,
Ամէն կողմ բոյր, թոյր ու համարի, ինձ կը թռչնի...
Հոս կը ծնին, հոն կը ծիւն, հոն կը սիրեն...

Ահա տարներն են ասոնք՝ կեանքով արբշտ թռչուններուն,
Որ, ալելուր - բաց ի՛նչ հպօր - ծառերուն մէջ թաքնուած,

Սիրոյ տօնը կը տօնեն...
Իրենց գոյն - գոյն փետուրներուն սարսուռն ահա կը տեսնեն,
Մինչ, գաղջ սիւքին հմայքին տակ, լանջքերն իրենց ըսպիտակ
Կը յորդին լուռ հեշտանքով, այնպէ՛ս, այնպէ՛ս կը հեւան...

Օ՛ր քերթուածը իրենց երգին...
Ահա շիւղերն աւշայեղ՝ մեղմ օրրումով կը կքին,
Երբ սիրահար զոյգերն անոնց, թոյլքներով խօլական,
Սիրոյ ցաւը հեշտանքի վերածելու կը ճգնին...
Ու կը հեւան, ու կը հեւան, լանջքերն իրենց ըսպիտակ
Այնքան անպօր են՝ հպօր ցաւին համար վայելքին...

Սո՛ւրբ բնութիւն...
Մեռելներն իսկ պէտք է զգան, կը խորհիմ,
Լքումին մէջ իրենց տրտում գիշերին,
Ողջ տարրերուն այս պոռթկումը ինչայեղ,
Այս յոյս համբո՛յրը երկնքին ու կեանքին...
Աստուածայի՛ն բնութիւն,
Կ'ուզեմ ըլլալ ես գերին քու հեթանոս քմայքին...
Քու բոյրերուդ, քու թոյրերուդ ծովին մէջ
Լողա՛լ, լողա՛լ, նոյնիսկ խեղդուիլ կը տենչամ.
Ա՛ն քիս, ա՛ն քիս.
Ահա քեզի կը յանձնեն, քու սերերուդ, սարսուռներուդ՝
Կեանքի տրտում գիշերներէն դատարկացած իմ հոգին...
Ա՛հ, թող նորէ՛ն, ինչպէս հին - հին օրերուն,
Լոյսով, Յոյսով յորդի ան...:

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾԻՐԱԶ

*Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մէջ, ու արեւը աչքերիս,
Ու աղբիւրները լեզուիս՝ սարից իջայ ես քաղաք,-
Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձիւնաթոյր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց յոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբոյր.
- Ի՛նչ թարմութիւն, - ասացին,- ի՛նչ թարմութիւն,- ու բացին
Լուսամուտներն իմ առջեւ, ու ես իմ սիրտը բացել՝
Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր, ու յամիկներ հոգեթով,
Կարծես մի ողջ բնութիւն մի պատանի էր դարձել,
Քաղաք իջել լեռներին՝ կ'անցնէր վմրուխտ հեթաթով...
Երկրէ երկիր շաղ տալով կակաչներն իր ձեռքերի,
Մեր երգերի լուսաբացն ու գարունը լեռների:*

ԱՆԱԿԵԿԱԼ ԳԱՐՈՒՆ

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Հովը դեռ ցուրտ էր երէկ, այլ յանկարծ այս առաւօտ
Գարնան ջինջ շունչը լեցուն պարտեկ, ճամբայ ու անդեր,
Ու բողբոջները բոլոր պատռեցան ինչպէս վարդեր
Ու յորձանքով պայթեցան ծիլ, շաքիլ, ձիւղ ու ծոցոտ:

Ահա քնքուշ ու դեղին հրանուկներն առաջին,
Ահա տերեւք ցողաթուրմ հապի կճեպը խպած
Ու նորաբոյս խոտերուն, ճղիկներուն վրայ թաց՝
Ահա համբոյրը անուշ արփույն մոլոր ճաճանչին:

Երկիրն լղի էր անշուշտ,- որովայնին խորը սուրբ
Գարունն հանդարտ կը ննչէր՝ խմելով աւիշը յուրթի,
Որ այժմ ողջ գիւղին վրայ այնպէս կը յորդի:

Ողջո՛յն գարնան պարթօնքին,- որքա՛ն սարսուռն է իր նուրբ
Մեր արեան մէջ ու որքա՛ն բուրաւետ են իր հովերն
Ու ի՛նչ սիրով կը հնչէ իր առաջին հրաւերն:

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՄԵՂԵԳԻՆԵՐ

ՊԷՊՕ ՍԵՄՈՆԵԱՆ

*Համանուագ կայ այսօր բնութեան մէջ եւ օդին՝
Ճոռուղիներն սիրակա՛նչ համերգի պէս ներդաշնակ,
Եր դաշներգէն ցնձազին մեղեդիներ գարնայի՛ն.
Երկինքն այսօր է՛ կարծես երգեհոն մը հովութեամբ:
Որուն ոսկէ՛, արծաթէ՛ ստեղծներուն վրայ ջինջ,
Կը նուագէ՛ն, կը կայթէ՛ն նուրբ մատներով թռչունի:*

*Առաւօտեան զով սիրքին ու վեփիտին թաւշային,
Աղբիւրներուն երգեցիկ, առուակներու խոխոջին
Լուսակարկաչ մեղեդիին՝ խարջափներով դաշնաւոր,
Ու գիւղակի մատուռին ղօղանջները մեղմօրօր
Կ'ըլլան համերգ ազգային, բնութեան մէջ բազմալար,
Սրնգահար հովիւն ալ՝ արուեստագէտ խմբավար:*

*Գարնանային համերգի մեղեդիներն այս ցնձուն,
Կ'ողողեն քիս նուագով, բնութեան խոր ձայներով:
Ժիրներէն քաղաքին, աղմուկներէն մայթերուն
Ու յափրանքի հովերէն հոգիս դարձած պարտասուն:
Կը վերանա՛յ ըմպելով վայելքի հե՛շտ բաժակէն
Կ'այլակերպուի փառահեղ լուսերգութեան այս տօնէն:*

*Կ'արձագանգէն հոգուս մէջ նուագները բնութեան,
Յուզումներու թրթռներու ձայնանիշեր կը դառնան.
Ծնունդ կ'առնեն արիւնէս նոր երանգներ խապերու,
Կ'այլափոխուի տարօրէն հոգիս վիհի բազմալար,
Կը զգամ ցաւը երկունքի ծնելիք նոր երգերու:
Լոյսի, ձայնի ծուլներն, որոնք փերթ-փերթ կը թափին,
Կ'ըլլան երգեր տաղաշար, մեղեդիներ գարնայի՛ն:*

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ՀԱՐՅԱՆՈՅՁ

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ



Հայաստանի մէջ Համացանցի Միութիւնը, Եւրասիա Հիմնարկի տրամադրած յատկացումին շնորհիւ, գործադրութեան դրած է հարցախոյզի ծրագիր մը, որ կը միտի բացայայտելու, թէ Հայաստանի ժողովուրդը որքանով ծանօթ է համացանցին:

Հարցախոյզին արդիւնքներուն համաձայն, ժողովուրդին 11,2 առ հարիւրը չ'օգտագործեր համացանցը, 21,1 առ հարիւրը անոր կարիքը չ'էն զգար, 12,3 առ հարիւրը հասողութիւն չ'ունի համացանցին, 11,3 առ հարիւրը չ'է յաճ, թէ ինչ է համացանցը, եւ 33,5 առ հարիւրը նիւթական կարելիութիւնները չ'ունի համացանց օգտագործելու համար:

Մեկնաբաններ այս տուեալներուն մէջ գտան զոյգ ցուցանիշներ: Նախ՝ Հայաստանի տնտեսական ոչ բարձր պայմաններ, եւ յետոյ՝ «Արմէնթէլ» ճշգրտ համացանցի բարձր գինները:

Աւելցնենք, որ հարցախոյզին մասնակցողներուն 5,1 առ հարիւրը միայն սեփական համակարգիչ ունի:

Հարցախոյզը նաեւ լուսարձակի տակ առած է Հայաստանի մէջ հեռաձայնի օգտագործումը: Արդիւնքներուն համաձայն, Հայաստանի բնակչութեան 12,3 առ հարիւրը հեռաձայնով օտուտած չ'է, իսկ 93 առ հարիւրը՝ բջիջային հեռաձայն չ'ունի: Բջիջային հեռաձայն ունեցողներուն մէկ հինգերորդը շաբաթը հազիւ քանի մը անգամ կը գործածէ վայն:

Ինչ կը վերաբերի երկրէն դուրս կատարուած հեռաձայնային խօսակցութիւններուն, տուեալները կը պարզեն, թէ հարցախոյզին մասնակցողներուն 36,5 առ հարիւրը կը հեռաձայնէ Ռուսիա, 6,6 առ հարիւրը՝ Ամերիկա, 4,4 առ հարիւրը՝ Եւրոպա, իսկ 5,4 առ հարիւրը՝ ԱՊՀ-ի տարբեր երկրներ:

Հարցախոյզին արդիւնքները նաեւ ցոյց տուած են, որ «Արմէնթէլ»-ի հաղորդակցութեան դրուածներէն օգտուողներուն կարեւոր մէկ մասը դժգոհ է ընկերութեան աշխատեցիկներէն:

«ՀՈԹՄԵՅԼ»Ը՝ ԲԶԻԶԱՅԻՆ ՀԵՌԱԶԱՅՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Այսուհետեւ ե-նամակներու փոխանակման «հոթմէյլ» (www.hotmail.com) դրուածները օգտագործողներ աշխարհի տարբեր երկրներուն մէջ կարելիութիւնը պիտի ունենան իրենց ե-նամակները ստուգել ընկերային հեռաձայնի միջոցով:

«Էմ. Էս. Էն.»-ի եւ վոտաֆոնի այս միացեալ նախաձեռնութեան շնորհիւ՝ դրուածներէն օգտուողը իր բջիջային հեռաձայնին վրայ կարճ պատգամ մը կը ստանայ, որ իրեն կը տեղեկացնէ, թէ նոր ե-նամակ մը ունի. ապա ենթական կրնայ կարգալ իր ե-նամակը, ինչպէս նաեւ՝ անոր պատասխանը ուղարկել:

Աւելին. դրուածները օգտագործողներ կարելիութիւնը պիտի ունենան իրենց բջիջային հեռաձայնին միջոցով «Էմ. Էս. Էն. մենսէճը» ծրագրին կապուելու եւ գիտնալու, թէ իրենց բարեկամներէն որո՞նք համացանցին վրայ են տուեալ պահու մը:


Բրիտանիոյ մէջ այս դրուածները հասողութիւնը ձրի է: Միակ վճարումները կը կատարուին ուղարկուած եւ ստացուած ե-նամակներուն եւ կարճ պատգամներուն համար (Էս. Էմ. Էս.):

ԻՐԱՔԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՇՈՒՐՁ ՎԵՐԱԴՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԵՍԱԿԷՏՆԵՐ՝ ՎՐԱՅՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ

Իրական թէ «անիրական» աշխարհին մէջ իրաքի դէմ պատերազմը օրուան նիւթն է: Ստորեւ տրուած կայքերէն ոմանք լրատուութեան եւ կարճ վերլուծումներէ անդին երթալով՝ կը փորձեն բացատրել, թէ ինչու համար իրաքի դէմ պատերազմը անհիմն է, մինչ ուրիշներ կը ներկայացնեն պատերազմը «հիմնաւորող» տուեալներ եւ ուսումնասիրութիւններ:

● www.iiss.org - Լոնտոն

նի մէջ գտնուող Ռազմավարական Ուսումնասիրութեան Ուսումնասիրութեան Միջազգային Հիմնարկը առանձին բաժին տրամադրած է իրաքի, ուր ներկայացուած են ռազմական ուժերուն եւ ամերիկեւրոպական ռազմական զորքերուն մասին քարտեզներ եւ տուեալներ:



յան բանակին զորքերը թիւներուն մասին քարտեզներ եւ տուեալներ: ● http://cftr.org - Արտաքին Յարաբերութիւններու խորհուրդին կայքը իրաքի շուրջ ուսումնասիրութիւններու բաժին




ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

«ՓԱՆՏԱ» ՀԱԿԱԺԱՀՐԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Հակաժահարային ծրագրներու պատրաստութեան ճարտարաբանութիւն մէջ տիրական ներկայութիւն եղող երկու ընկերութիւններն են «Միմանթէք» (Նորթ Էնթրփրայզ) եւ «Մըֆաֆի»: Սակայն այդ չի նշանակեր, թէ չկան հակաժահարային այլ ծրագրեր, որոնց կարելի է լիովին վստահիլ:

Վերջինք «Փանտա»-ի օրինակը: Հրապարակի վրայ կը գտնուին «Փանտա»-ի երեք տարբերակներ (ոչ մասնագէտներուն, արհեստավարժներուն եւ գործարարներուն տարբերակները), իսկ ծրագրին նորագոյն տարբերակը՝ «Փանտա Էնթրփրայզ» փլէթները:



Հրապարակ իջաւ վերջերս: Ծրագիրը օգտագործողին կու տայ ժահարէ մաքողական պաշտպանութիւն եւ համակարգչային ժահար անմիջապէս կը փոխադրէ «Հիւանդանոց» կոչուող բաժինը: Ծուրջ 70 տոլար արժող այս ծրագրին մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել օգտագործել միայն քանի մը կոճակ քիթ ընկող:

Ծրագիրը համակարգիչը օգտագործողին կու տայ ժահարէ մաքողական պաշտպանութիւն եւ համակարգչային ժահար անմիջապէս կը փոխադրէ «Հիւանդանոց» կոչուող բաժինը:

Ծուրջ 70 տոլար արժող այս ծրագրին մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել օգտագործել միայն քանի մը կոճակ քիթ ընկող:


ՀԱՄԱԿԱՐԳԻՉԱՅԻՆ ԺԱՀՐԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐՈՒ ՄԻՏՔԵՐՈՒՆ ՄԷՉ

Արու, համակարգիչի «խենթ», սիրալին կեանք չունեցող, 14էն 34 տարեկան:

Մասնագէտներ այսպէս կը բնորոշեն համակարգչային ժահար պատրաստող «տիպական» անձ մը, որ կարողութիւնը ունի մաքող օրեր հաղորդակցութեան համաշխարհային դրուածները քառասուն վիճակի մատնելու:

Բրիտանական «Սոֆոս Փի. Էլ. Սի.» հակաժահարային ծրագրերը պատրաստող ընկերութեան պատասխանատուներէն Եան Հրուսթայի համաձայն, ամիսը 1000 համակարգչային ժահար կը պատրաստուին հէքերներու կողմէ, որոնք թիրախները հետզհետէ աւելի բազմապիս կը դառնան: «Յարդ ոչ մէկ ցուցանիշ կայ, թէ համակարգչային ժահար պատրաստելու դիտարկութիւնը նահանջ կ'արձանագրէ», կ'աւելցնեն ան:

Մեկնաբաններ գրեթէ համակարծիք են, թէ յառա-



ջիկայ տարիներուն արտադրուած համակարգչային ժահարները թիւը տեւաբար աճ պիտի արձանագրէ: «Անոնք (համակարգչային ժահար պատրաստողները) ընկերուհիներու քրոնիք պակաս կը տառապին եւ ընկերային կեանքի մէջ ձախողած անձեր են, որոնք կ'անուշաւ են քոտեր գրելով», կ'ըսէ Հրուսթայ:

Տակաւին Յունուարին, 22ամեայ բրիտասարգ մը երկու տարուան բանաժողովներէն ղառապարտուեցաւ ե-նամակի միջոցով տարածուող երեք ժահար պատրաստելու եւ տարածելու համար: Արարք մը, որ վնաս հասցուց 42 տարբեր երկրներուն մէջ գործող աւելի քան 27 հազար համակարգիչներու:



Համացանցի միջոցով ժահար տարածելու հէքերներ համակարգչային այլազան ծրագրերներու մէջ թուլութիւններ կ'որոնեն: Նորագոյն օփըյէթիսկ սիսթեմները աւելի ենթակայ են համակարգչային ժահարներ թիրախ դառնալու, քան՝ նախնական դրուածները, ինչպէս՝ «Տոս» կամ «Ուինտոզ 3,1»:

Անցեալ ամիս համակարգչային այլ ժահար մը՝ «որդ»-ը ընտանիքին պատկանող «Սլէմըր»ը, 10 վայրկեանի մէջ տարածուեցաւ աշխարհով մէկ եւ Հարաւային Քորէայի մէջ համակարգչային դրուածները գրեթէ անդամալուծեց, Միացեալ Նահանգներու մէջ բազմաթիւ դրամատուներ, իրենց կարգին, խանգարուած համակարգիչներու հարցերը լուծելու աշխատանքին լծուեցան:

«Սլէմըր» թիրախ էր «Մայքրոսոֆթ» ընկերութեան «Էս. Քիւ. Էլ. Սըրվըր տաթայէյս» ծրագրերը: Համակարգչային ժահար պատրաստողներու գոհը հաւանաբար ըլլալ միեւնոյն ընկերութեան «տոթնէթ» դրուածներ, որ տարբեր համակարգչային դրուածներ կը միացնէ, համացանցի միջոցով անդադար գրամական շահարկումներ եւ գործարարական փոխանակումներ կատարելու համար:

Համակարգչային ժահար պատրաստողներ յաճախ տեղեկութիւններ կը փոխանակեն, որպէսզի կարենան տուեալ ժահար մը տարբերակները ստեղծելով աւաւելագոյն վնաս հասցնել համակարգչային դրուածներուն: Իր բազմաթիւ տարբերակներով ծանօթ ժահարէն նշենք տիրահաւակ «Քլէյզը», որ անցնող 13 ամիսներուն ամէնէն աւելի տարածուած ժահարէն մէկն է:

«Քլէյզ» ժահար «Սորս քոտ»ը կարելի է արձանագրել համացանցէն, որոշ փոփոխութիւններ կատարել եւ արձակել նորաստեղծ տարբերակ...: Ահա գործողութիւն մը, գոր դիւրեւ կրնայ կատարել «Նորափթիթ» հէքեր մը: Մնացեալը՝ աւելի եւ «սկուսներու կճուղում» է:

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾՆԵՐԻ ԱՅՆՆԵՐՈՒ
«Պ. ՍԵՒԱԿ» ՄԱՍՆԱԳԵՒԳԻ «ՈՒՍՍԵՐՉԱԿ 40» ԹԱՏԵՐԱՍՏՈՒԹԵՐ

Հովանաւորութեամբ՝
Ը. Ը. ԴԵՍՊԱՆ ԱՐԵՎ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

Կը ներկայացնէ՝
ԱԼԵԽԱՆՏՐՕ ՔԱՍՈՆԱՅԻ
«ԾԱՌԵՐԸ ԿԱՆԳՈՒՆ ԿԸ ՄԱՀԱՆԱՆ»
Թատերախաղը 2 արարով
Բեմադրութեամբ՝ **ՈՊՊԵՐԹ ԱՈՒՔԵԼԵԱՆԻ**

Մասնակցութեամբ՝ Հայրենի մենահամբաւ դերասանուհի՝
ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆԻ

●Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 21 Մարտ 2003, աշակերտական, կիսօր ետք ժամը 4:30ին, սակ՝ 5000 լ. ու., Շաբաթ 22 եւ Կիրակի 23 Մարտ 2003 երեկոյան ժամը 8:30ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» բաւերարանին մէջ: Սակ՝ 10,000 լ. ու.:

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՉ
ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգայն»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէ առնուազն օր մը առաջ, Մինչեւ երեկոյան ժամը 5:00:

ՄԱՀԱՉԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մաճազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

Մանկապատանեկան

ԳԱՐՈՒՆ Է

Գարունը կը սկսի 21 Մարտին եւ կը վերջանայ 20 Յունիսին:

Օդը կը ջերմանայ արեւուն ազդեցութեամբ տակ, օրերը կ'երկարին: Հատիկները կը ծլին, ծիւղերը կը բացուին, ծաղիկները կը յայտնուին, թռչունները կ'երգեն, ձագուկները կը ծնին... Բնութիւնը կ'արթննայ ձմեռէն ետք: Սակայն ուշադրութիւն կը պահենք, թէ Մարտը խնայա՞ծ է:



ԲՆՈՒԹԵԱՆ ՄԻՋ

● **ՅԱՆՔԸ** - Գարնան երկրագործները կը ցանեն հատիկները: Ցորենը, եգիպտացորենը եւ արեւածաղիկները յատուկ շարքերով կը ցանուին հողին մէջ:

● **ԳԱՌՆՈՒԿՆԵՐԸ** - Մարտին գառնուկները կը ծնին: Անոնք տակաւին կը խմեն իրենց մօր կաթը, սակայն գանոնք կը տանին դաշտ, որպէսզի «համեսեն» նաեւ թարմ խոտը:

● **ՈՋՆԻՆ** - Ան իր ձմեռանային քունէն կ'արթննայ նիւարացած: Կը յարձակի որդերուն, խիտուններուն եւ նոյնիսկ օձի ձագերուն վրայ:

● **ԴԵՂՁԵՆԻՆ** - Անոր

բացուած ծաղիկները ամրան պիտի վերածուին անուշիկ ու համեղ դեղձերու:

● **ԹՄԲԻԻ ՏԵՐԵՒԸ** - Ան իր ծիւղէն դուրս կ'ելլէ: Կը բացուի հովազարի մը նման: Թմբին բուժիչ յատուկութեամբ ծառ մըն է:

● **ԵԼԱԿԸ** - Պզտիկ կանաչ ելակը կարմիր դարձած է: Մանր հատիկներ կը ծածկեն գայն:

● **ՔՕՂԱԶԵՂՁԸ** - Ան կը ծաղկի անտառներուն մէջ, որովհետեւ արեւ չի սրբեր: Ան անուշ կը բու-

րէ եւ բարտարեր կը համարուի:

● **ՄԵՂՈՒՆ** - Ան կը ծծէ ծաղիկներուն նեկտարը, իսկ բեղմնափոշին կը կպչի անոր մազերուն:

Ան փոշին հետք կը «կը պտտցնէ» ծաղիկէ-ծաղիկ եւ այս ձեւով անոնց կարելիութիւնը կու տայ բեղմնաւորուելու եւ պտուղներ տալու:

● **ՉԱՏԿԱՃՃԻՆ** - Գիտէ՞ր, թէ անոր կոնակի վրայի կէտերը ոչ մէկ կապ ունին անոր տարիքին հետ: Ան կ'ապրի միայն մէկ տարի:

ԱՅԼԱԶԱՆ

ՀԵՌԱԶԱՅՆՈՎ ՈՒՌՈՒԳՈՒՄ

Այլեւս կարելի պիտի ըլլայ հեռաձայնին միջոցով ջրել մեր սիրած տնային բոյսերը: Կը բաւէ, որ մենք օժտուած ըլլանք ելեկտրական ծաղկամանով մը, որուն հետ կարելի պիտի ըլլայ կապուիլ մեր բլի-ջային հեռաձայնով: Եթէ բոյսը ջուրի կը կարօտի, մենք ուղղակի կը կատարենք հեռուէն:



ԳԻՇԵՐ ԲԱՐԻ

Գիտնականներ նշմարած են, թէ Ասիոյ կարգ մը շրջաններու օրանկութեանը (կապիկի տեսակ) ամէն գիշեր «փփփփփփ» ի նման նոյն հնչիւնը կ'արձակեն, կարծէք անոնք իրարու «գիշեր բարի» ըսել կ'ուզեն: Ուրեմն այս անասունները ունին յատուկ սովորութիւններ, զորս իրարու կը փոխանցեն:



ԱՌԱՆՑ ԲԻԾԻ «ՍՓԱԿԷԹԹԻՆԵՐ»

Դո՞ւն ալ սովորութիւն ունիս շապիկդ աղտոտելու սոսով սփակէթթի ուտելու ժամանակ:

Ճարտարագէտ մը հնարած է յատուկ կաղապար մը՝ պատրաստելու համար գրեթէ աներեւոյթ խորտուրորդ մակերեսով սփակէթթիներ: Այս ձեւով այս խմորները նուազ սահուն կը դառնան եւ նուազ սոս կը կաթնեցնեն:



ԳԻՐԱԽՏ ԳՈՂ ՄԸ

Աւստրալիացի գող մը տհաճ անակնկալի մը հանդիպած է, երբ անդրադարձած է, թէ գողցած պայուսակին մէջ գոյութիւն ունէր 1,20 մեթր երկարութեամբ թունաւոր օձ մը: Պայուսակին տէրը, որ սողունը գտած էր կառատան մը մէջ, ըսաւ, թէ այս դէպքը վստահաբար դաս պիտի ըլլար գողին...



ԿԵՂԾ ԶՈՒԿԵՐ


Ճափոնական ընկերութիւն մը հրապարակ իջեցուցած է առուարիտի համար անուշիկ փոքր կեղծ ձուկեր: Անոնց լողակները կը շարժին շնորհիւ նոր տեսակի կերպրկալէ շինուած գեղարւեստական մկաններու: Ալ պէտք չունինք ամէն օր մեր ձուկերը կերակրելու...



«ՊԶՏԻԿ-ՄՁՏԻԿ»Ի ԺԱՄԱՆՅԻ ԼՈՒՅՈՒՄՆԵՐ

- 1) 1 - 6 - 2 - 9 - 3 - 7 - 4 - 9 - 5 - Ա: 2) Թիւ 1 խաղացողին կոնակի պայուսակը. թիւ 2 խաղացողին փէշը. երրորդ խաղացողին ակնոցները. շապիկը. աչ ոտքին երկար գոլպան եւ ձախ ոտքին լողալու յատուկ կոշիկը: 3) Ամէնէն վարի ճամբայէն: 4) Կան բազմաթիւ լուծումներ. օրինակ հասար. 2+3x2=10. 4x4+4=20. 20+15-5=30. 2x2x10=40:

Ժ Ա Մ Ա Ն Յ



Կետերը իրարու միացուր 1 - 55՝ գտնելու համար պահուած պատկերը:



Կրնա՞ս գտնել պատկերներուն ձիշ շարքը՝ հասկնալու համար պահուածը:

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄՐՅԱՆՔ - 1

2003 թուականը Ազգային վարժանքերու տարի հռչակող Ազգային Իշխանութեանց որոշումին ծիրէն ներս, կը յայտարարենք

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԱԾՔՆԵՐՈՒ ՄՐՅԱՆՔ՝

3 - 6 տարեկան մանուկներուն հասցեագրուած այս մրցանքին կրնան մասնակցիլ բոլոր փափաքողները՝ անհատաբար թէ խմբովին: Կարճ պատուածքները (առաւելագոյնը՝ 100 բառ) պէտք է Ուսումնական Խորհուրդի գրասենեակ (Ազգային առաջնորդարան, Պուրճ Համուտ, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ կից) հասած ըլլան մինչեւ Շաբաթ՝ 14 Յունիս 2003, փակ պահարանի մէջ:

Մրցանքին մանրամասնութիւնները կը յայտարարուին ի մօտոյ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ


«ԱՁԳԱԿ»Ի

ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱՁԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:


ՁԵՆԱՅԻՆ ԱՃԽԱՍԱՆԸ

ՊԶՏԻԿ «ՊԵՅՊԻ-ՅՈՒԹ»ՆԸ




ցպիկ մը անցուր իւրաքանչիւր ծակին մէջէն: Անոր երկու կողմերը միարժէ խցան մը:

6) Թուղթի մը վրայ գծէ, ներկէ եւ կտրէ 6 մարգիկներ, իւրաքանչիւր երեքը մէկ գոյնով ներկելով: Չանոնք փակցուր լաթակալներուն վրայ:




7) Լաթակալները անցուր ցպիկներուն վրայ: Խցանները ներկէ: Փինկ փոնկի գնդակը ներկէ Փութպոլի գնդակի մը նման:

ԻՆՉՊԷՍ ԽԱՂԱՍԸ




Խաղացողներու թիւ - Երկու: Խաղի նպատակ - Գնդակը մտցնել մրցակիցին բերդին մէջ: Այն անձը, որ 5 կէտ կը նշանակէ, կը յաղթէ: Խաղացողները կը կե-



նան տուփին երկու կողմերը: Իւրաքանչիւր խաղացող ունի երկու կողմի վրայ մտցնելու երեք մարգիկներ շարժելու համար:

ՊԵՔՔ ՈՒՆԻՄ

Կօշիկի խաւաքարտէ տուփի մը, լուցկիի 2 մեծ տուփերու դարակներու, կպչուն երիզի, փինկ փոնկի գնդակի մը, խորովածի 4 ցպիկներու, 8 խցան-



ներու, թուղթի կտորի մը, 6 հատ փայտէ լաթակալներու, 1 քաթրի (չմոռնաս ուշադրութեամբ գործածելու), 1 ծակելիք մեքենայի, սեւ ներկի մը (ֆեօքթ), խէփի, կանաչ եւ ճերմակ ջրաներկի:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

1) Չափահասէ մը խնդրէ, որ քաթրով լուցկիի տուփի մը մեծութեամբ բացուածք մը բա-





ջել: Սեւ մատիտով գծէ ցանցը:

4) Ծակելիք մեքենայով կօշիկի տուփին երկու մեծ կողմերը 4 ծակեր ծակէ: Նոյն հեռաւորութիւնը պահէ ծակերուն միջեւ:

5) Խորովածի փայտէ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՓԻՆԿ ՓՈՆԿ

ՌԱԶՄԻԿ ՇԵՄԵՄԵԱՆ ՀԱՍԱԻ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

Մոն Լա Սալի մեջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի գարնանային մրցաշարքին իր կատարած մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.Վ. Ասական Ռազմիկ Շեմեմեան յաջողաբար պարտութեան մատնել է ետք էլի Ֆայ-յաթը, Տէնի Ուաքիմը եւ Քրիսթոֆըր Ռաբըրը, երեքն ալ 3-0 արդիւնքով, ապահովեց քառորդ աւարտական հանդիմանին իր տոմար. ան այսօր կը ճակատի Մոհամէտ Շըբբաուիի դէմ:

Հ.Մ.Ը.Մ.Վ. մարզիկ Մալէթ Թաուիլի իր կատարած առաջին երկու մրցումներուն յաջողաբար պարտութեան մատնել է ետք Ճօ Ատտուրը (3-0) եւ Մուսթաֆա Տաստուրը (3-2), երրորդին պարտութիւն մը կրեց Մոհամէտ Հապաշէն (3-0) եւ դուրս մնաց մրցաշարքէն:

Աղլկանց մրցումներուն, այսօր, Լարա Քէչէպաշեան կը ճակատի ժոէլ Թոհմէի դէմ, Լիզա Պարիբեան՝ Մայսա Պրաշյայէսի դէմ եւ վերջապէս Նոէլ Քէշիշեան՝ Միւլլանա Զըզպիի դէմ:

ԼԵՎԱՍ

ՇԱՐԱԹԱՎԵՐԶԻ ՅԱՅՏԱԳԻՐ

Շարաթավերջին, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան բոլորի դաշտին վրայ, Հ.Մ.Ը.Մ.Վ.Մ.Վ. մինի ֆուտբոլի մրցումները տեղի կ'ունենան հետեւեալ յայտարարւած հիմունքներով:

ԱՅՍՕՐ	
Փոքր - Ա. Խանամիրեան - Եղիշէ Մանուկեան	2:15
Միջակ - Եղիշէ Մանուկեան - Ճեմարան	3:00
Փոքր - Յառաջ - Մեարպեան	3:30
Միջակ - Ա. Ազնէ - Թուրքի Բոյն	4:00
Փոքր - Ճեմարան - Ա. Բառանից Մանկանց	4:45
Միջակ - Լ. եւ Ա. Յակոբեան - Մեարպեան	5:15

ՎԱՂՐ

Միջակ - Լ. եւ Ա. Յակոբեան - Մեարպեան յաղթական ընդդէմ՝ Եղիշէ Մանուկեան - Ճեմարան յաղթականից
Միջակ - Թուրքի Բոյն - Ա. Ազնէ յաղթականը ընդդէմ Կ. Բ. Վ.

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԱՅՍՕՐ՝ ՍԵԼԹԻՔՍ - ԼԷՅՔԸՐԶ

Էն. Պի. Էյի երկուսն արցունքներուն, արդէն իսկ փլշոֆի արցունքներուն իր տոմար ապահոված Տայիս Մազրիթս իր դաշտին վրայ 112 - 110 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Սան Անթոնիո Սիբրուին, յետ երկարագուման: Մրցումին աւարտին մէկ երկվարկետան առաջ Սիբրուին մարտիկ Թոմի Փարքը նշանակեց իր կայմին յաղթականի կողմը: Տայիսի մարտիկներէն Տրքը Նովիթթի նշանակեց 34 կէտ եւ 12 ռիպայուն:

Սպրաւներսի մէջ, Քիւնկ 107 - 99 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը Լոս Անձելըս Լէյքըրը: Էն. Պի. Էյի

●ԱՅՍՕՐ
Արայնթա Հոքս - Յիւստոնի Սիբրուին

ԱՆԻ ԿԱԶՄԱՄԱՅ...

Շարունակուած 4րդ Էջըն

Երեւն, 1983), «Անիի ներկայ տարուան պեղումները» («Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան», հատոր Ա., էջ 124 - 127, Երեւան, 1983) եւ «Գարձեալ Իգնատիոս Հոռոմոսի մանրանկարչի մասին» («Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան», հատոր Բ., էջ 116 - 121, Երեւան, 1987):

Այս երեք յոգուածներուն ընդմէջէն ի յայտ կու գան Գարեգին Ա. Յոգուածներին արժանիքները՝ իբրեւ հայազէտ, հնագիտական արշակախումբներու մասնակից եւ հայ արուեստը ուսումնասիրող: Փաստօրէն, հայ ժողովուրդը շատ բանով կը պարտի Կիլիկիոյ հայոց երջանկայիշատակ հայրապետին՝ Անիի աւերակներուն (ոչ եւ միայն) ուսումնասիրութեան աշխատանքին մէջ:

Գրքով - պոլիէրին մէջ տեղ գտած են նաեւ այլ յոգուածներ, որոնք տեղ կ'առնեն ընդհանրապէս Անի մայրաքաղաքի մշակութային կոթողներուն եւ մասնաւորապէս

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Մ. Ը. Մ. 2-1 ՅԱՂԹԵՑ ԹՐԻՓՈԼԻՒ ՄԷՋ, ՏԵՂԻՈՅՆ ՇԱՊԱՊԻՆ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 20րդ հանգրուանի մրցումներուն, երէկ տեղի ունեցան երկու ճակատումներ, Թրիփոլի մէջ:

Առաջին ճակատումին, Թրիփոլի Քաղաքապետարանի դաշտին վրայ, հիւրընկալ կազմը՝ Շապալ Թրիփոլի 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրին՝ Հ.Մ.Ը.Մ.Վ.Մ.Վ. մինչ երկրորդ մրցումին, որ տեղի ունեցաւ վերոյիշեալ դաշտին կից գտնուող փոքր դաշտին վրայ, Մահապապ Թրիփոլի 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Իթիմահին (6րդ): Վերջին դիրքը զբաղող Մահապապ այսօր սովորական գրեց եղա՛նակի իր չորրորդ յաղթանակը:

Վերադառնալով Շապալ Թրիփոլի - Հ.Մ.Ը.Մ.Վ. մրցումին, թէեւ հիւսիսի կազմը ինք բացաւ մրցումին հաշիւը, սակայն Հ.Մ.Ը.Մ.Վ.Մ.Վ. մարզիկները երկու անգամ պատասխանելով յաջողեցան արձանագրել եղանակի իրենց 14րդ յաղթանակը եւ աւելիով ամրապնդեցին պարագլուխի իրենց դիրքը: Ճոնի Բուլթանի նշանակեց Հ.Մ.Ը.Մ.Վ.Մ.Վ. հաւասարութեան կողմ, իսկ Դրօ Քէ-

հէյեան՝ յաղթանակի կողմ:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Վ.Մ.Վ. ունեցաւ 45 կէտ: 2րդ դիրքը զբաղող Հ.Մ.Մ.Վ.Մ.Վ. որ 11 կէտով ետ կը մնայ Հ.Մ.Ը.Մ.Վ.Մ.Վ. սօր նոյն դաշտին վրայ:

Ստորեւ՝ Բ. դասակարգի ախոյեանութեան 20րդ հանգրուանի մնացեալ մրցումներուն յայտագիրը (ընթացող մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 3:00ին).

ԱՅՍՕՐ		ԴԱՇՏ	
Ռիատա Ուալ Ատապ	-	Հ.Մ.Մ.	Թրիփոլի
Ռիատա - Իսլամ Պըրթ Շիմալի		Պ. Համուտ	ՎԱՂՐ
Անի Սայտա - Թատմոն Նապարիէ Սուր			
Հըրրիէ Մաժտալ Այնճար	-		
		Նահատա Պար	Էլիաս Խիարա

●ՍՏՈՐԵԻՒՆՆԵՐ՝ Ա. դասակարգի ախոյեանութեան 17րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՀԱՐԱԹ. 22 ՄԱՐՏ		ԺԱՄ ԴԱՇՏ	
Շապալ Մահէլ - Օլիմփիք		3:00ին	Մ. Աւան
Անար - Մապարա		4:45ին	Պէլլուք

ԿԻՐԱԿԻ. 23 ՄԱՐՏ		ԹՐԻՓՈԼԻ	
Սալամ - Թատմոն Սուր		3:00ին	Պ. Համուտ
Սաժա - Սաֆա		3:00ին	Պ. Համուտ
Անտ - Պըրթ		4:45ին	Պէլլուք
Նըմմէ - Ալսա Ալէյ		4:45ին	Մ. Աւան

●ԼԻԲԱՆԱՆԻ ֆուտբոլի բաժակի մրցաշարքին 1-16րդ հանգրուանէն յետո՛վ, Նըմմէ յաջողեցան ապահովել քառորդ աւարտական հանգրուանին իր տոմար, 2-1 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Պըրթը:

ԺԸՆԵՒ

«ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»Ի ԵՒ ԵՌՒ. Է. ԷՖ. Ա.Ի ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ

«Չէմփիընչ Լիկ»ի Բ. հանգրուանի մրցումներէն ետք եւ ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի քառորդ աւարտականի դարձ մրցումներէն ետք, երէկ ժընեի մէջ (Չուիցերիա) տեղի ունեցան «Չէմփիընչ Լիկ»ի քառորդ աւարտականի եւ ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի կիսաւարտականի հանգրուանի վիճակազուրիւնները:

ԵՌ. Է. ԷՖ. Ա.Ի քառորդ աւարտականի դարձ մրցումներուն Լիվրնոյ իր դաշտին վրայ 2 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ետք Սեյթիքէն, դուրս մնաց մրցաշարքէն: Փոքր մրցաշարքէն դուրս զգեց Փանաթինայի (2 - 0), Լացիո Ռոմա Պէլլոքաթը (2 - 1), իսկ Պուաիսի Մալայան (4 - 1 փնայիթներով):

Կիսաւարտականի երթի մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ապրիլ 10ին, իսկ դարձ մրցումը՝ Ապրիլ 24ին: Աւարտականի մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիս 21ին, Սեփիլայի մէջ (Սպանիա):

Կիսաւարտականի երթի մրցումին, Սեյթիք իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Պուաիսի, իսկ Լացիո Ռոմա՝ Փոքրուն:

«Չէմփիընչ Լիկ»ի մրցաշարքին քառորդ աւարտականի մրցումները պիտի ըլլան բաւական տաք եւ հետաքրքրական: Այդ չորս ճակատումներէն ամէնէն աւելի հետաքրքրականը սակայն պիտի ըլլան մասալոնարաք երկու մրցումներ, որոնց ընթացքին Ռեալ Մատրիտ պիտի ճակատի Մանչեսթըր Եունայթեդի դէմ, իսկ Եունայթեդը՝ Պարսիկայի դէմ: Նշենք, թէ վերոնշեալ երկու մրցումներուն յաղթականները կիսաւարտականի պիտի ճակատին իրարու դէմ: Քառորդ աւարտականի երթի ճակատումը տեղի պիտի ունենայ Ինթեր Միլանի եւ Վալենսիայի միջեւ, իսկ չորրորդը՝ Այաքս Ամսթըրտամի եւ Ա. Սէ. Միլանի միջեւ:

Քառորդ աւարտականի երթի մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ Ապրիլ 8ին եւ 9ին, իսկ դարձ մրցումները՝ Ապրիլ 22ին եւ 23ին: Կիսաւարտականի երթի մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ Մայիս 6ին եւ 7ին, իսկ դարձ մրցումները՝ Մայիս 13ին եւ 14ին: Աւարտականի մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիս 28ին, Մանչեսթըր Եունայթեդի «Օլտ Թրէֆորտ» դաշտին վրայ:

«ԱՐԱԼԵԱՆ - Հ. Մ. Ը. Մ.» ՄԱՐԶԱՄՇՎՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

ՄԱՐԶԱՆՔԻ ԴԱՍԱԸՆԹԱՑՔՆԵՐ



BODY COMBAT, BODY PUMP, BODY STEP, BODY ATTACK

- Դասընթացները սկսած են, ամէն օր երկուշաբթիէն Ուրբաթ:
- Յատուկ յայտագիր 16 տարեկանէ վեր աշակերտներուն, Շաբաթ օրերը:

Սամրամասնութեանց համար հեռաձայնել՝
03-384020 եւ 04-716715 քիւրուին:

ՖՈՐՄԱՒԵԼՈՒ

ՎԱՂՐ՝ ՄԱԼԵՁԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Ֆորմիւլա 1ի 2003ի աշխարհի ախոյեանութեան 2րդ հանգրուանի կրան փրին, որ տեղի պիտի ունենայ Քուալա Լամփուրի մէջ (Մալեզիա), յետաձգուելու կարիք չունի, յայտնեց Ֆորմիւլա 1ի միջազգային ֆեդերատիոնի նախագահ Մաքս Մոսլի: Ըստ շրջան ընդ տարածաշրջանի մրցումներուն, իրաքի հարցով կրնար մրցումը յետաձգուել, սակայն կրան փրին ընդհանուր պատասխանատուն՝ Աճմէտ Մուսթաֆա յայտնեց, թէ անիկ տեղի պիտի ունենայ նախօրոք ճշգրտած ժամանակին, այսինքն՝ վաղը, Կիրակի առաւօտեան ժամը 9:00ին, Պէլլուքի ժամանակացոյցով:

Այս մրցումը կ'ընդգրկէ 56 լէփ, ընդամենը 310,5 քմ.:

Նշենք, թէ երէկուան ոչ պաշտօնական փորձերուն, Ֆեուարիի գերմանացի վարորդ Միքայէլ Շու-մախըր արձանագրեց լաւագոյն արդիւնքը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԻ ՀԱՐՈՒՍՏ ՇԱՐԱԹԱՎԵՐՁԸ

Շարաթավերջին տեղի ունենալիք Եւրոպայի ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն անկասկած պիտի ըլլան հետաքրքրական ճակատումներ, մասնաւոր Սպանիոյ եւ Իտալիոյ մէջ, ուր պարագլուխի դիրքերը զբաղող խումբերը, օտար դաշտերու վրայ քիչ մը դժուար մրցումներ ունին կատարելիք:

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 27րդ հանգրուանի մրցումներուն, Իտալի Մատրիտ դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Տեֆորթիօ Գորուսի դաշտը:

Նոյնն է պարագան Իտալիոյ մէջ, ուր Քալչիոյի 26րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը զբաղող Եունայթեդը «Սան Սիրօ»ի մէջ հիւրը պիտի ըլլայ 3րդ դիրքը զբաղող Ա. Սէ. Միլանի:

Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Անգլիոյ մէջ, պարագլուխի դիրքերը զբաղող խումբերը՝ Մարսէյ, Պայէրն Միւնխեն եւ Արսենալ համեմատաբար աւելի դիրքին մրցումներ ունին կատարելիք:

Ստորեւ՝ շարաթավերջի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէլլուքի ժամով):

ՔԱՂՉՈ (26րդ ՀԱՆԳՐՈՒՄ)

ԱՅՍՕՐ		ԺԱՄ	
Մոնեմա - Ռեյնից		19:00ին	
Ա. Սէ. Միլան - Եունայթեդ		21:30ին	

ՎԱՂՐ

Աքալանքա Միլան	16:00ին
Բոմօ - Պոլոնիա	16:00ին
Էմփոլի - Պրեշիա	16:00ին
Փարմա - Լացիո Ռոմա	16:00ին
Ա. Էս. Ռոմա - Փիաչենցա	16:00ին
Թորինօ - Քերուսիա	16:00ին
Ուտինգեթ - Ինթեր Միլան	21:30ին

ՄԱՍԻԱ (27րդ ՀԱՆԳՐՈՒՄ)

ԱՅՍՕՐ		ԺԱՄ	
Ռայօ Վալքանօ - Արիթիքո Մատրիտ		22:30ին	

ՎԱՂՐ

Մալա Վիլո - Արիթիքո Պիլլաօ	18:00ին
Մայորքա - Ռեալ Վալադոլիտ	18:00ին
Ռեքրեաթիօ Հուելվա - Օսասունա	18:00ին
Սեփիլա - Ալաես	18:00ին
Վալենսիա - Էսփանիոլ	18:00ին
Վիարեալ - Ռեալ Սոսիէտատ	18:00ին
Մալա - Ռեալ Պէթիս	18:00ին
Պարսիկոն - Ռասիկ Սանթանտեր	21:00ին
Ռեալ Մատրիտ - Տեֆորթիօ Գորուս	21:30ին

ԱՆԳՐԱ (31րդ ՀԱՆԳՐՈՒՄ)

ԱՅՍՕՐ		ԺԱՄ	
Պիմիլիկեմ - Ուեսթ Պրոմուիչ		14:00ին	
Մանչ. Եունայթեդ - Ֆուլհեմ		14:30ին	
Չելսի - Մանչեսթըր Սիթի		17:00ին	
Միտլըլդսթը - Չարլթըն		17:00ին	
Նիւթսըլ - Պլեյքաթը		17:00ին	
Սաութհեմթը - Ասթոն Վիլա		17:00ին	
Ուեսթ Համ - Սանտըրլէմս		17:00ին	

ՎԱՂՐ

Լիվըրպոլ - Լիօ	16:00ին
Արսենալ - Էվըրթը	18:00ին

ՖՐԱՆՍԱ (31րդ ՀԱՆԳՐՈՒՄ)

ԱՅՍՕՐ		ԺԱՄ	
Մոնփելիէ - Մարսէյ			
Լիլ - Պարսիա			
Օքսէն - Լանց			
Լը Հաւրը - Մոնպարօ			
Պորտօ - Նանց			
Ա. Էս. Ռոմա - Ռեյն			
Փարիք ՍԷԳ Ժերմէն - Սըտան			
Սթրասպուրկ - Սոչօ			
Կեկկան - Թրուա			

ՎԱՂՐ

Նիս - Լիոն	
------------	--

ՊՈՒՆԵՍԵՆԻԿԱ (26րդ ՀԱՆԳՐՈՒՄ)

ԱՅՍՕՐ		ԺԱՄ	
Շալքէ - 1860 Միւնխի			
Պորուսիա Մեուշ. - Համպուրկ			
Վերտըր Պրեմըն - Հանովըր 96			
Պայէրն Միւնխի - Հանգա Ռոսթըր			
Վոլֆսպուրկ - Պոլսոմ			
Քայլըրպուսթըրըն - Պայէր Լեյքըրուզըն			
Արմինիա Պիլլֆելտ - Պորուսիա Տորքմունտ			

ՎԱՂՐ

Հեքթա Պերլին - Գորպուս	
Նրուքիպըր - Նիւրնբերկ	

ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋՍԶԳԱՅՆԱԿԱՆԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԻՐԱՔԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆՏՐԱՆՔԻՆ ՀԱՄԱՐ

Ընկերվար Միջազգայնականի գործադիր մարմինը Մարտ 20ին հրապարակեց յայտարարություն մը՝ Իրաքի դեմ ամերիկեբրիտանական յարձակումին գծով: Ընկերվար Միջազգայնականի վարչությունը իր յայտարարության մէջ դատապարտեց Միացեալ Նահանգներու վարչակազմի որոշումը՝ առանց միջազգային ընտանիքին համաձայնութեան Իրաքի դեմ պատերազմ յայտարարել:

Վարչութիւնը վերահաստատեց 20-21 Յունուար 2003ին Հոմի մէջ կայացած Ընկերվար Միջազգայնականի վարչութեան նիստին Իրաքի տագնապին առնչութեամբ միաձայնութեամբ ընդունուած մտնեցումը, ըստ որուն՝ քաղաքական եւ խաղաղ միջոցներով պէտք է հասնի Իրաքի հաւաքական քանդումի վէջերու չեղման:

«Նկատի ունենալով, որ ՄԱԿի Անվտանգութեան Խորհուրդի զիջարարութեամբ իրականացուող միջազգային քննչական առաքելութիւնը, որուն նպատակն էր հասնի Իրաքի մէջ գոյութիւն ունեցող արգիւտած վէջերու վերացման, եւ նկատի ունենալով, որ այդ աշխատանքը սկսած էր հասնի 2024ի յարիւնքներու, վարչութիւնը անընդունելի կը համարէ եւ կը դատապարտէ Միացեալ Նահանգներու վարչակազմի որոշումը՝ առանց ՄԱԿի Անվտանգութեան Խորհուրդի թոյլատրութեան միակողմանիօրէն պատերազմի սկսելու Իրաքի դեմ», նշուած է յայտարարութեան մէջ:

Վարչութիւնը նաեւ կը վերահաստատէ իր համոզումը, թէ ուժի գործածութիւնը ամէն պարագայի պէտք էրմնար իբրեւ «վերջին միջոց» եւ կրնար կիրարկուի միջազգային համընդհանուր օրինականութեան ծիրէն ներս, համաձայն ՄԱԿի կանոնադրութեան: Ընկերվար Միջազգայնականի վարչութիւնը նաեւ վերահաստատած է իրաքեան տագնապին առնչութեամբ դիւանագիտական եւ քաղաքական նախաձեռնութիւններու սկսելու անհրաժեշտութիւնը:

Յայտարարութեան մէջ վարչութիւնը կոչ կ'ուղղէ յարգել մարդկային իրաւունքները եւ ՄԱԿի ղեկավարութեամբ Իրաքի համար երաշխաւորել անկախ եւ ժողովրդավարական ապագայ: Միաժամանակ, Ընկերվար Միջազգայնականի վարչութիւնը առաջարկած է Միջազգային Ոճրադատ Ատեանին ձայնով քննութիւն բանալ Իրաքի վարչակազմին դէմ՝ մարդկութեան դէմ գործադրուած հաւանական ոճիրներու մասին:

ԻՐԱՔԻ ՎՐԱՅ ՅԱՄԱՔԱՅԻՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՍԿՍԱԻ...

Ծարունակուած Ա. Էջէն

անապատային օդակայան մը, որ ամառի էր ու լքուած: Ամերիկեան ուժերը սակայն երէկ տուն իրենց առաջին փորձը: Ամերիկացի զինուորը սպաննուած է կռիւի ընթացքին: Դաշնակից ուժերը քանի մը այլ փոխ տուն էր ուղղաթիւն մը ջախջախուցաւ Քուէյթի մէջ: Արկածին փոխ ցացին ուր բրիտանացի եւ չորս ամերիկացի զինուորներ: Արկածին պատճառը չյստակացաւ: Միացեալ Նահանգներու նախագահ Ջորձ Գեյթը եւ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլէրը ցուցնուցին յայտնեցին զոհերուն ընտանիքներուն, դիտել տալով, սակայն որ պատերազմին զոհեր պիտի արձանագրուին: Պէր խօսելով Իրաքի դէմ ձեռնարկուած գործողութեան մասին, ըսաւ որ անիկա յաւ կ'ընթանայ, բայցեւայնպէս պէտք չէ սկնկալել որ շուտով պիտի աւարտի:

ՍԱՏՏԱՄ ԵՒ ԸՆՏՐԱՆՔԸ ՈՂՋ - ԱՌՈՂՋ ԵՆ

Իրաքի նախագահ Սատտամ Հրիւէյնի ճակատագիրին մասին շրջան բնող լուրերուն հակադրւելով տեղեկատուութեան նախարար Մոհամէտ Մաշիտ Սահաֆ յայտարարեց, որ Իրաքի ղեկավարն ու անոր ընտանիքը առողջ են ու ապահով:

Ամերիկեան ու բրիտանական աղբիւրներ լուրեր հրապարակած էին Սատտամի հաւանական սպանութեան մասին: Ըստ այդ լուրերուն Հինգշաբթի առաւօտեան կատարուած ոմբակոծումի թիրախ դարձած կեդրոններէն մէկուն մէջ կը գտնուէր Սատտամ եւ թէ ան հաւանաբար վիրաւորուած է: «Էյ. Պի. Մի.» կայանը մինչեւ իսկ իսկողորած էր, թէ ակնատեսներ տեսած են, թէ Սատտամ պատգարակի մը վրայ դրուած կը փոխադրուէր ոմբակոծուած շէնքէն: Մի. Այ. Էյ. սակայն յայտնեց, որ շոջափելի որեւէ տուեալ չկայ հաստատելու այս լուրը:

Միւս կողմէ, «ԻՆՍ» լրատու գործակալութիւնը հարդրեց, որ Սատտամ Հրիւէյն խնուսացած է տանեակ կախարար տղարով վարձատրել ամէն զինուոր, որ վար կ'առնէ թշնամի օդանաւեր, կամ ամերիկացի ու բրիտանացի զինուորներ կը սպաննէ: Իսկ Սահաֆ ըսաւ, որ ձեռքարկուած զինուորներուն հետ իբրեւ պատերազմի գերիներ պիտի չվարուին, այլ՝ վարձկաններ եւ պատերազմի ոճրագործներ:

ՌՈՒՄԻԱ, ՖՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ԿԸ ՄԵՐԺԵՆ ԻՐԱՔՅԻ ԴԻՒԱՆԱԳԵՏՆԵՐ ԱՐՏԱՔՍԵԼՈՒ ՃՈՐՃ ՊՈՒԵՒ ՊԱՇԱՆՋԸ

Ռուսիա, Ֆրանսա եւ այլ երկիրներ կը մերժեն ընդառաջել Միացեալ Նահանգներու նախագահ Ջորձ Գեյթի այն պահանջին, որ կը վերաբերի Իրաքի դիւանագետներու արտաքսման եւ իրաքեան դեսպանատուններու փակման:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ռոբերտ ֆանթեր Ֆրանսուա Ռիւսսօ ըսաւ, որ ամերիկեան իշխանութիւնները Փարիզէն պահանջած են արտաքսել Իրաքի դիւանագետները: Ռիւսսօ ասելով, որ Ֆրանսա չի կրնար ընդառաջել, որովհետեւ պատճառ չունի իրաքցիները արտաքսելու: Նախագահ Ժաք Շիրաք, իր կարգին, երէկ Պրիւսիայի վեհաժողովի աւարտին վերստին շեշտեց, որ

Միացեալ Նահանգներու Բրիտանիա միջազգային օրէնքը բռնաբարած են առանց ՄԱԿի հաւանութեան պատերազմ յայտարարած ըլլալու համար:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով իր կարգին ըսաւ, որ եթէ Մոսկուայի եւս առաջարկուի Իրաքի դիւանագետներ արտաքսել, պիտի չընդառաջէ պահանջին: Ռուսիա կը մերժէ նաեւ ստեցնել Իրաքի նախագահ Սատտամ Հրիւէյնի դրամագրութիւնները, այնքան ստեղծ որ չէ հաստատուած թէ այդ ֆոնտերը կապ ունին ահաբեկչութեան կամ դրամ լուսլու գործողութիւններու հետ:

Ռուսիոյ նախագահ

ՊՐԻԻՔՍԵԼ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎԸ ԱՒԱՐՏԵՑԱՒ ԵՐԷԿՈՒԱՆ ՆԻՍՏԻՆ ԿԻՊՐԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԳԵՐԱԿՇՈՒԵՑ ԻՐԱՔԵԱՆԸ

Պրիւսիայէ, 21 (ԱՅՓ).- Եւրոպական Միութեան ղեկավարները կոչ ուղղեցին թուրք-կիպրական կառավարութեան՝ վերատեսութեան ենթարկելու ՄԱԿի խաղաղարար ծրագիրը մերժող կեցուածքը:

Պրիւսիայի մէջ կայացած երկօրեայ վեհաժողովի աւարտին հրապարակուած յայտարարութիւնը կոչ ուղղեց կիպրոսի տագնապին առնչակից բոլոր կողմերուն՝ ճիգ չխնայել, յանգելու համար լուծումի մը, որուն հիման վրայ պիտի իրականանայ կղզին վերամիացնելու ծրագիրը: Ե. Միութիւնը կոչ կ'ուղղէր յատկապէս թուրք կիպրացի ղեկավարներուն, որպէսզի ընդունին ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հովանաւորած ծրագիրը: Անան առաջարկած էր ծրագիրը հանրաքուէի դնել կիպրոսի երկու շրջաններուն մէջ: Յունական կիպրոսը ընդունած էր, սակայն թրքական թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տէնքթաշ մերժած էր եւ քանակցութիւնները՝ առկախուած:

Պրիւսիայի երկրորդ օրուան այս ժողովին, երէկ, ուշագրաւ էր, որ կիպրական հարցը գերակշռեց իրաքեանը: Սակայն ժողովին բացման օրը, իրաքեան հարցը տիրապետող օրակարգն էր, եւ հակառակ այս գծով մէկ կողմէ Ֆրանսայի, Գերմանիոյ եւ միւս կողմէ՝ Արիւսիոյ, Սպանիոյ հակառակ ծանօթ կեցուածքներուն, կարելի եղած էր իրաքեան հարցով միացեալ ելքակացութեան մը յանգիլ:

Եւրոպական Միութեան ղեկավարները կոչ ուղղեցին Իսրայիլի եւ պաղեստինցիներուն՝ ինքնապսպումի դիմելու, յատկապէս այս օրերուն, երբ ամբողջ շրջանը կը տագնապի Իրաքի դէմ յայտարարուած պատերազմով:

ՎԵՅԱԺՈՂՈՎԸ ԶՍՈՈՅԱՒ ՆԱԵՒ ՊԱՐԵՍԻՆԵՒԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Պրիւսիայի մէջ կայացած վեհաժողովի աւարտին հրապարակուած յայտարարութիւնը կոչ ուղղեց քանակցութիւններու եւ անոնց ձայնով՝ պաղեստինեիսրայիլեան հաշտութեան: Յայտարարութիւնը դատապարտեց պաղեստինեան շրջաններուն մէջ կրակային բնակեցման վայրեր հաստատելու Իսրայիլի քաղաքականութիւնը:

Միւս կողմէ Իսրայիլ անտեղի ու անօգուտ յայտարարեց խաղաղութեան միջազգային խորհրդածողով մը, որ առաջարկուած էր Հինգշաբթի օր, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիսիք սը Վիլփէնի կողմէ: Իսրայիլցի պաշտօնատար մը ըսաւ, որ Իսրայիլ կ'ուզէ, որ Ռաշիմկընի մնայ խաղաղութեան գործընթացի հովանաւորութիւնը եւ որիչ նախաձեռնութիւններ չառաջարկուին:

Պաղեստինցիները սակայն ողջունեցին Տը Վիլփէնի առաջարկը: Պաղեստինցի նախարար Սաէպ Ուրալթաթ ըսաւ, որ Ֆրանսայի առաջարկը կրնայ վերջ տալ Իսրայիլեան գրաման, ինչպէս նաեւ կրնայ օժանդակել խաղաղութեան ձայնով քարտէսի կիրարկման:

ԻՐԱՔԻ ՀԱՐՅՈՎ ԲՈՂՈՔԻ ՄԵԾ ԱԼԻՔԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԻՆ



Սան Ֆրանսիսքոյի ցուցարարներէն մաս մը


Յաջորդաբար երկրորդ օրն ըլլալով՝ Օայրագոյն Արեւելքէն մինչեւ Արեւմուտք, բողոքի ցուցերը շարունակուեցան՝ անընդունելի յայտարարելով Իրաքի դէմ ձեռնարկուած պատերազմը: Կարգ մը քաղաքներու մէջ խաղաղ ցուցերը վերածուեցան խռովութիւններու եւ արհիւսալի բախումներու՝ ցուցարարներուն եւ ապահովութեան ուժերուն միջեւ:

Նապոլուսի, Կապայի, Իսլամապատի, Տարապի, Գահիրէի, Աթէն մինչեւ Արեւմուտք, բողոքի ցուցերը շարունակուեցան՝ անընդունելի յայտարարելով Իրաքի դէմ ձեռնարկուած պատերազմը: Կարգ մը քաղաքներու մէջ խաղաղ ցուցերը վերածուեցան խռովութիւններու եւ արհիւսալի բախումներու՝ ցուցարարներուն եւ ապահովութեան ուժերուն միջեւ:

սակայն, հարաւային եւ կեդրոնական ամերիկեան երկիրներու մէջ տեղի ունեցած ցուցերը, ուր ցուցարարներու պատանդներուն լոյսնագները կը համապատասխանէին իրարու՝ Արժանթին մինչեւ Մեքսիքա: (ԱՅՓ)

Բողոքի ցուցեր տեղի ունեցան Ամմանի,

Յատկանշական են,



ՊԱՏԱՆԻ ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Երեկոյեան Յատուկ Դատընթացքներ ՄԵՍՐՈՂԵԱՆ

Արուեստից Վարժարանին մէջ

- * Ոսկերչական ձեւաորում
* Մոնի կաղապարաշինութիւն
* Աղաճանդաշարութիւն
* Անգլերէն լեզու
* Համակարգչային գիտութիւն-computer

Գործակցարար Լիբանանի Վարպետ Ոսկերիչներու եւ Գոհարագործներու Սեմտիքային

01/260504 Մեքրոպեան. Միշտ մէկ քայլ առջեւ

ԱԵՒԼԻ ԲԱՆ ԿԵՍ ՄԻԼԻՈՆ ՉԵՇԵՆՆԵՐ ՎԱՂԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻՆ ՀԱՆՐԱՔՈՒԵԻՆ

Չեչենիոյ մէջ վաղը տեղի ունենալիք հասնաբուէին նախօրեակին, Ռուսիա թափ տուաւ ապահովական միջոցառումներուն: Ռուսական ուժերը մանրակրկիտ քննութիւններու ենթարկեցին քուէարկութեան կեդրոններն ու անոնց շրջակայքը՝ կանխարգիլելու համար ապահովութեան սպառնացող որեւէ միջազգայ: Ռուս գնդապետ Եուրի Քոստրովեց ըսաւ, որ հսկողութիւնը խիստ պիտի ըլլայ նաեւ վաղը, երաշխաւորելու համար քուէարկողներուն ապահովութիւնը: Ռուսական ուժերը գիշերեցեղէ կը հսկեն քուէարկութեան կեդրոններուն շուրջ: Ալեյի քան կէս միլիոն չեչեններ պիտի մասնակցին վաղուան հանրաքուէին, որ կ'անշուղի նոր սահ-

մանադրութեան հաստատման եւ նոր նախագահ ու խորհրդարան ընտրելու կարելիութեան: Չեչեն ընդունուած թիրախ դարձած էին խափանարածեան հանրաքուէի եւ կոչ կ'ուղղեն ժող-

վորդին չմասնակցելու: Անցնող քանի մը օրերուն քուէարկութեան քանի մը կեդրոններ թիրախ դարձած էին խափանարածեան հանրաքուէի եւ կոչ կ'ուղղեն ժող-

PHOTO NERSES (Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ) ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 25ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ 36 photo ֆիլմի Գկարահանումը միայն 8,000 լ. ռ. (Kodak Royal քարտի վրայ տպուած եւ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍՍԱՅԵՆ ԵՒ Լուսանկարի Գոր ֆիլմ մը + ալպոմ մը + Գկարի INDEX մը Կը Գկարեմը փոքրերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒԱՆ յատուկ յարդարանքով PHOTO NERSES: Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»ի դիմաց: Դեռ. 01 - 261858 եւ 01 - 255992